ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

02.02.2015թ.
238-ի 2

ՀՀ վարչապետ
պարոն Հովիկ Աբրահամյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աբրահամյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել նետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ գաղտնի որոշում (որոշման նախագիծ) է քննարկվել ՀՀ կառավարության նիստերում 2015թ.-ին,
2. Խնդրում ենք տրամադրել ՀՀ կառավարության նիստերում 2015թ.-ին քննարկված գաղտնի որոշումների (որոշումների նախագծերի) ցանկը (ըստ "Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ պարբերությունների),
3. Խնդրում ենք հայտնել, թե ո՞ր ոլորտներին են վերաբերում գաղտնի որոշումները (որոշումների նախագծերը (բնապահպանություն, առողջապահություն, մշակույթ, կրթություն եւ գիտություն, աշխատանք եւ սոցիալական հարցեր, տնտեսություն, արտաքին հարաբերություններ, տրանսպորտ եւ կապ եւ այլն):

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան